

Ըստ Արգիւլֆի, է. դարուն Բեթղեհէմի եկեղեցին կը կոչուէր Ս. Աստուածածին: 870ին Բեռնարդոս վանականին համաձայն, այրին մուտքը կը բացուէր հարաւային կողմը, մինչ ելքը կը գտնուէր արեւելք: Լատինական տիրապետութեան սկիզբը, այս արեւելեան դուռը նշանակուած կը գտնենք Դանիէլ կրօնաւորի Ուղեգրութեան մէջ. «Արեւելեան դռնէն Ս. Այրը մանելով՝ հողին վրայ ձախին կ'ունենանք այն տեղը ուր ծնաւ մեր Տէրը, վրան կը գտնուի սեղան մը, ուր պատարագ կ'ըլլայ»: Այցելու մը այսօր հիւսիսային սանդուխէն պիտի իջնէ, այլապէս պիտի չը կարենայ արտայայտուիլ: Շատերը կը պնդեն սակայն, արեւելեան կողմի մուտքն է որ կարծել կու տայ մեզ թէ՛ ԺԲ. դարուն, Այրը իջնելիք սանդուղին ուղղութիւնը քանի մը փոփոխութիւններ կրած է:

Այս երկրորդ շրջանին ուխտաւորները համաձայն են Մսուրէն գտնադանել Քրիստոսի ծննդեան տեղը: Ծննդեան տեղը Այրին արեւելեան կողմն է, առաջին տեղն է այն՝ որուն կը հանգիպի ուխտաւորը, երբ ներս մտած է: Անոր վրայ շինուած է սեղան մը հանդիսաւոր պատարագներու համար: Գուրսը կը դրուի շարժուն սեղան մը, մասնաւորներու արբողութիւններու յատուկ: Անստոյգ կը մնայ թէ արդեօք փոքր կողակի մէջ հաստատուած սեղան կա՞ր, ինչպէս այսօր կայ: Կը կարծենք թէ այս շրջանին գոյութիւն ունէր չորս սիւներով սեղան մը, ինչպէս կ'երևի ԺԲ. դարուն: Պատմիչներուն և ուղևորներուն ըսածին նայելով Այրը ունէր ոսկեգօծումներ և լաւ պահպանուած նկարներ:

Այս շրջանին յիշատակարանները նուազ բացայայտ են Մսուրքի մօտին. որոշ բան մը չէ կարելի ըսել թէ Ս. Հեղինէի արծաթ Մսուրքը ի՞նչ եղած է Պարսից և Արաբաց արշաւանքին ժամանակ: Հաւանական է որ ան ուրիշ սրբութիւններու հետ Պոլիս փոխադրուած ըլլայ, պատերազմներու հետեանքով: 1157ին Պոլսի եկեղեցիներէն միոյն գանձատան մէջ էր «այն Մսուրը որուն մէջ բազմեցաւ Փրկիչը»: Յուստինիանոսի կատարած վերանորոգութեան ժամանակ Ս. Այրին բաշխումին մէջ ունէ փոփոխութիւն կատարուեցա՞ւ: Կարելի է և նոյն իսկ հաւանական, ա՛յն փոփոխութիւններու հետեանքով զոր կրեց վերնայարկի սրբավայրը: Օրինակի համար, այս երկրորդ շրջանին, կը հաս-